# ԻՄԱՍՏՈՒՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼ

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

***7 Բայց Սուրբ Հոգին ամեն մէկի մեջ տարբեր ձևով է հայտնվում ընդհանուրի օգտի համար:***
***8 Այսպես, Սուրբ Հոգին մէկին տալիս է իմաստությամբ հորդորելու կարողություն, միյուսին գիտության խոսք՝ նույն Հոգուց:***

***Ղուկ. 2:40,52 - 40 Երեխան էլ աճում էր եւ զօրանում հոգիով՝ իմաստությունով լցուած. եւ Աստուծո շնորհքը նորա վրա էր: 52 Եւ Հիսուսը զարգանում էր իմաստությունով եւ հասակով, եւ շնորհքով՝ Աստուծո եւ մարդկանց մօտ:***

***Եփ. 1:17 - 17 Որ մեր Տէր Հիսուս Քրիստոսի Աստուածը՝ փառքի Հայրը ձեզ տա իմաստության եւ հայտնության հոգի՝ իր գիտությունով.***

***Կող. 1:9 - Նորա համար մենք էլ այն օրից երբ լսեցինք, չենք դադարում ձեզ համար աղօթելուց եւ Աստծուն աղաչանքներ մատուցելուց որպեսզի լցվեք նորա կամքի գիտությամբ, ամեն իմաստությունով եւ հոգեւոր հանճարով.***

- **Իմաստությունը Խոստացված է:**

***Ղուկ. 21:15 - 15 Որովհետեւ ես բերան եւ իմաստութիւն կ՛տամ ձեզ. որին չեն կարողանա հակառակ խօսել եւ ոչ ընդդիմանալ ձեր բոլոր հակառակորդները:***

***Գործ. 6:3,10 - 3 Հիմա, եղբայրներ, ձեզանից եօթը վկայված մարդիկ ընտրեցէք, Սուրբ Հոգով եւ իմաստությունով լցված, որոնց կը նշանակենք այս ծառայությունների համար:***

***10 Եւ չէին կարողանում դէմ կանգնել այն իմաստությանը՝ եւ այն Հոգուն, որով նա խօսում էր:***

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. 3 Թագ. 12:1-17

*3 եւ եկան Հերոբովամը եւ Իսրայէլի բոլոր ժողովուրդը եւ խօսեցին Ռոբովամի հետ ասելով. 4 Հայրդ*
*մեր լուծը ծանրացրել էր. Բայց դու հիմա թեթեւացրու քո հօր սահմանած խիստ ծառայությունն ու մեզ*
*վրա դրած ծանր լուծը, այն ժամանակ քեզ ծառայություն կանենք: 5 Ռոբովամ ասաց նրանց. Գնացէք եւ*
*երեք օրից հետո դարձեալ ինձ մօտ եկէք, եւ ժողովուրդը գնաց: 6 **Եւ Ռոբովամ թագավորը***
***խորհրդակցեց այն ծերերի հետ,** որ կանգնում էին նորա հայր Սողոմոնի առաջին նորա կենդանութեան*
*օրոք, եւ ասաց. Դուք ինձ ի՞նչպէս էք **խորհուրդ** տալիս, որ ես այս ժողովրդին պատասխան տամ: 7 Եւ*
*նորանք ասեցին նորան այս խօսքը. Եթէ դու այսօր այս ժողովրդին ծառայություն մատուցես եւ նորանց*
*ծառայես, եւ նորանց ընդառաջես ու նորանց քաղցր խօսքեր ասես, այն ժամանակ նորանք ընդմիշտ կը*
*ծառայեն քեզ:*

*8 **Ռոբովամը, սակայն մերժեց ծերերի տված խորհուրդը**. Եւ **խորհրդակցեց** այն երիտասարդներից,*
*որ իր հետ էին մեծացել եւ նորա առաջին կանգնած էին: 9 Եւ ասեց նորանց. Դո՞ւք ինչ **խորհուրդ էք***
*տալիս որ այս ժողովրդին պատասխան տամ, որ ինձ հետ խօսեցին ասելով թէ այն լուծը թեթեւացրու որ*
*քո հայրը մեզ վրա է դրել: 10 Եւ նորա հետ մեծացած երիտասարդները խօսեցին նորա հետ ասելով.*
*Այսպէս ասա այն ժողովրդին, որ քեզ հետ խօսելով ասել են. Քո հայրը մեր լուծը ծանրացրել էր, իսկ դու*
*թեթեւացրու մեր վերայից. Այսպէս խօսիր նորանց հետ. **Իմ ճկույթը հօրս մէջքից հաստ է.** 11 Արդ եթե*
*իմ հայրը ձեզ վրա ծանր լուծ է դրել, բայց ես ավելացնելու եմ ձեր լուծի վրա. Իմ հայրը ձեզ*
*խարազաններով էր խրատում, բայց ես ձեզ կարիճներով եմ խրատելու:*

*12 Եւ Հերոբովամն ու բոլոր ժողովուրդը եկան Ռոբովամի մօտ երրորդ օրը, ինչպէս որ թագավորը ասել էր*
*նրանց. Երրորդ օրը դարձեալ ինձ մօտ եկէք: 13 Եւ թագավորը խստությամբ պատասխանեց ժողովրդին,*

*եւ մերժեց ծերերի տուած **խորհուրդը,** որ տուել էին իրեն: 14 Եւ նորանց հետ խօսեց այն երիտասարդների*
***խորհրդի** պէս ասելով. Իմ հայրը ձեր լուծը ծանրացրել էր, բայց ես աւելացնելու եմ ձեր լուծի վրա. Իմ
հայրը ձեզ խարազաններով էր խրատում, բայց ես ձեզ կարիճներով եմ խրատելու: 15 Եւ թագաւորը
ժողովրդին չլսեց, որովհետեւ Տիրոջ կողմից այսպէս էր դարձուած, որպէս զի հաստատի իր այն խօսքը որ
Տէրն ասել էր Սիլօնացի Աքիայի ձեռով Նաբատեան Հերոբովամին:*

*16 Եւ երբոր բոլոր Իսրայէլը տեսաւ, որ թագաւորը նորանց **չլսեց,** այն ժամանակ ժողովուրդը
պատասխանեց թագաւորին ասելով. Մենք ինչ բաժին ունենք Դաւիթի մօտ. Եւ Հեսսէի որդու մօտ
ժառանգութիւն չունենք. Իսրայէլ գնա քո վրաններըը. Դու ինքդ հոգա Դաւիթի տան հոգսերը. Եւ
Իսրայէլը գնաց իր վրանները: 17 Եւ Իսրայէլի որդկանց վերայ որ բնակվում էին Հուդայի քաղաքներում,
թագաւոր եղաւ Ռոբովամը:*

## ԲԱՆԱԼԻ ԲԱՌ. YA`ATS – ՅԱ՝ԷԹՍ – 80 ԱՆԳԱՄ 74 ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ

***Խորհուրդ տալ, Խորհրդակցել, Նպատակ դնել, Պլանավորել. 7x – խորհրդակցել***

## I. ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԵՏ, ՆԱԽՔԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼԸ:

***5 Ռոբովամ ասաց նրանց. Գնացէք եւ երեք օրից հետո դարձեալ ինձ մօտ եկէք, եւ ժողովուրդը
գնաց:***

*6 Եւ Ռոբովամ թագաւորը **խորհրդակցեց** այն ծերերի հետ...*

- **Աստվածաշունչը մեզ հորդորում է իմաստություն գտնել շատ խորհրդականների միջոցով: The Bible urges us to find wisdom through many counselors:**

***Առակ. 11:14 - Առաջնորդություն չլինելիս ժողովուրդը կընկնի, բայց խորհրդատուների
շատությունով փրկություն կլինի:***

***Առակ. 15:22 - 22 Նպատակները խանգարվում են խորհուրդ չլինելիս, բայց խորհրդականների
շատությունով հաստատվում են:***

***Առակ. 24:6 - ...Հաջողությունը խորհրդականների շատությունով կլինի:***

- **Ուրիշների հետ խորհրդակցելու Նպատակը հետեվյալն է, ընդլայնել ձեր գիտելիքները եվ կատարելագործել ձեր դատողությունը: Որոշումը ձերն է եվ պետք է հիմնված լինի լավագույն տեղեկատվության վրա:**

## II. ՀԱՊՃԵՍՏ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՆ:

***8 Ռոբովամը, սակայն մերժեց ծերերի տուած խորհուրդը.*** *(Որովհետև հակառակ էր իր սկզբունքներին)*

***8 Եւ խորհրդակցեց այն երիտասարդներից, որ իր հետ էին մեծացել եւ նորա առաջին
կանգնած էին:***

***13 Եւ թագաւորը խստութեամբ պատասխանեց ժողովրդին, եւ մերժեց ծերերի տուած
խորհուրդը, որ տուել էին իրեն: 14 Եւ նորանց հետ խօսեց այն երիտասարդների խորհրդի պէս
ասելով.***

*Առակ. 18:13 - Ով առանց բան լսելու պատասխան է տալիս , սա նորա համար հիմարություն է եւ ամօթ:*

## III. ԱՄԵՆ ՈՐՈՇՈՒՄ ՈՒՆԻ ԻՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ:

*16 Եւ երբոր բոլոր Իսրայէլը տեսաւ, որ թագաւորը նորանց չլսեց, այն ժամանակ ժողովուրդը պատասխանեց թագաւորին ասելով. Մենք ի՞նչ բաժին ունենք Դաւիթի մօտ. Եւ Հեսսէի որդու մօտ ժառանգություն չունենք. Իսրայէլ գնա քո վրանները. Դու ինքդ հոգա Դաւիթի տան հոգսերը. Եւ Իսրայէլը գնաց իր վրանները: 17 Եւ Իսրայէլի որդկանց վերայ որ բնակվում էին Հուդայի քաղաքներում, թագավոր եղավ Ռոբովամը:*

*Առակ. 12:15 - 15 Յիմարի ճանապարհն ուղիղ է իր աչքի առաջին, բայց խրատ լսողն իմաստուն է:*

*Հակ. 1:19 - 19 Ուստի, իմ սիրելի եղբայրներ, թող ամեն մարդ շուտ լինի լսելու համար, եւ ծանր՝ խօսելու համար, եւ ծանր՝ բարկանալու համար:*

*Հակ. 3:13-17 - 13 Ձեր մեջ ո՞վ է իմաստուն եւ խելացի, թող նա բարի վարքով ցույց տա իմաստությամբ և հեզությանը կատարած իր գործերը: 14 Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակություն ունեք ձեր սրտերում, մի պարծեցք եւ սուտ մի ասէք ճշմարտութեան դէմ: 15 Այս իմաստութիւնը վերեւից իջած չէ, այլ երկրավոր է, մարմնավոր եւ դիվային: 16 Որովհետեւ ուր որ նախանձ եւ կռիվ կա, այնտեղ անկարգություն եւ ամեն չար բաներ կան:*

*17 Բայց վերին իմաստությունը նախ եւ առաջ սուրբ է, եւ հետո խաղաղարար, հեզ, հլու, ողորմութիւնով եւ բարի պտուղներով լիքը, անկողմնասէր, անկեղծ:*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հարցեր տալու համար

1. **Ի՞նչ է ասում Աստվածաշունչը տվյալ որոշման վերաբերյալ:**
   **What does the Bible have to say about this decision?**
   *Առակ. 2:6 - Որովհետեւ Տէրն է տալիս իմաստութիւնը, նորա բերանիցն է գիտութիւնն ու հանճարը:*
2. **Ո՞վ կարող է օգնել ինձ ավելի լավ հասկանալ, թե ինչ է ասում Աստծո Խոսքը տվյալ որոշման վերաբերյալ:**
   **Who can help me better understand what God's Word says about this decision?**
3. **Հիշեք, որ յուրաքանչյուր պատմություն ունի երկու կողմ:**
   **Remember that there are two sides to every story.**
4. **Ո՞րոնք են իմ որոշման հավանական դրդապատճառները:**
   **What Possible Motives Are Driving My Decision?**
5. **Խուսափե՛ք շատ առանձին խոսակցություններ ունենալուց:**
   **Avoid having many separate conversations.**